

**ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**Արտյուն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր՝ նորամուծական գործունեություն, խթանում, ագրարային  
ոլորտ, արտոնյալ վարկավորում

Ներկայումս ՀՀ ագրարային ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասը գտնվում է բավականին բարդ ֆինանսատնտեսական դրության մեջ: Ոլորտում դեռևս ամբողջովին չի հաղթահարվել վնասաբերությունը, իսկ արտադրանքի ինքնարժեքը նախկինի պես շարունակում է բարձր մնալ: Բարձր է նաև արտադրության միջոցների մաշվածության աստիճանը, իսկ դրանց նորացման հնարավորությունները բացակայում են: Ծյուղում մեծամասամբ կիրառվում են հնացած տեխնոլոգիաներ, մշակաբույսերի ցածր բերքատու տեսակներ և գյուղատնտեսական կենդանիների ցածր մթերատու ցեղատեսակներ, արտադրության կազմակերպման և կառավարման անարդյունավետ մեթոդներ:

Ոլորտում բավականին ցածր է նորամուծական գործունեության ակտիվությունը, ինչը բացատրվում է նորամուծական գործունեության խթանման արդյունավետ մեխանիզմների, շուկայական տնտեսությանը համապատասխանող գիտատեխնիկական համակարգի բացակայությամբ: Սա հանգեցնում է գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի բարձրացմանը և մրցունակության նվազմանը, խոչընդոտում է գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ագրարային ոլորտում նորամուծական գործունեությունը նշանակում է նոր տեխնոլոգիաների, նոր տեխնիկայի, մշակաբույսերի նոր սորտերի, կենդանիների նոր ցեղատեսակների, նոր պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների, նոր բուժանյութերի, արտադրության կազմակերպման, ֆինանսավորման և վարկավորման նոր մեթոդների կիրառում<sup>1</sup>: Նորամուծական գործունեության հիմնական ուղղությունները ներկայացված են աղյուսակ 1-ում:

---

<sup>1</sup> Шайтан Б. И. Инновации в АПК и роль службы сельскохозяйственного консультирования// Материалы Международной научно-практической конференции «Инновационная деятельность в АПК: опыт и проблемы» (13–14 января 2005 г.). – М., 2005.

**Աղյուսակ 1. Ագրարային ոլորտում նորանուծական գործունեության հիմնական ուղղությունները<sup>2</sup>**

Նորանուծության ուղղությունը	Նորանուծության տեսակը
Սելեկցիոն-գենետիկական	1. Գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտեր և հիբրիդներ 2. Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների նոր ցեղատեսակներ 3. Հիվանդությունների, վնասատուների, անբարենպաստ կլիմայական պայմանների նկատմամբ կայուն բուսատեսակների և կենդանիների ստացում
Տեխնոլոգիական և արտադրական	1. Նոր տեխնիկայի կիրառում 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման նոր տեխնոլոգիաներ 3. Պարարտանյութերի նոր տեսակներ 4. Բույսերի պաշտպանության նոր միջոցներ 5. Մթերքի արտադրության և պահպանման նոր էներգախնայող տեխնոլոգիաներ
Կազմակերպատնտեսական	1. Կոոպերացիայի զարգացում 2. Տեխնիկական սպասարկման և ռեսուրսներով ապահովման նոր ձևեր 3. Ագրոպարենային համալիրում կազմակերպման և կառավարման նոր ձևեր 4. Նորանուծությունների մարքեթինգ 5. Նորանուծական խորհրդատվական համակարգի ստեղծում
Սոցիալական	1. Գիտատեխնիկական ապահովման կադրային համակարգի ձևավորում 2. Ագրարային ոլորտի աշխատողների աշխատանքային պայմանների բարելավում 3. Ագրոտուրիզմի զարգացում
Բնապահպանական	1. Հողագործության բարելավում 2. Շրջակա միջավայրի պահպանություն
Տեղեկատվական	1. Գյուղատնտեսական արտադրության գործընթացների համակարգչայնացում 2. Գյուղական տարածքներում համացանցի հասանելիություն
Ֆինանսական	1. Ֆինանսավորման նոր մեթոդների կիրառում 2. Գնագոյացման նոր մեխանիզմների ներդրում

Զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը էապես կախված է նորանուծական գործունեության ակտիվությունից: Ընդ որում, նորանուծական գործունեության խթանումը հանդիսանում է պետական ագրարային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:

<sup>2</sup> Иванов В. А. Методологические основы инновационного развития агропромышленного комплекса // Экономические и социальные перемены: Факты, тенденции, прогноз. – 2008. – N 2 (2). – с. 55

Տնտեսագիտական գրականության մեջ նորամուծական գործունեության պետական խթանման մեթոդները դասակարգված են երկու խմբի մեջ՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի պետական խթանումը ենթադրում է բյուջետային և արտաբյուջետային ֆինանսական ռեսուրսների բաշխման միջոցով նորամուծական ենթակառուցվածքների ձևավորում: Անուղղակի պետական խթանումն իրականացվում է պետության հարկային, ապահովագրական, ամորտիզացիոն, արտոնագրային, արտոնյալ վարկավորման քաղաքականության միջոցով<sup>3</sup>: Ուղղակի մեթոդները անմիջականորեն խթանում են գիտական նվաճումների, նորամուծական ծառայությունների առաջարկը, իսկ անուղղակի մեթոդները՝ դրանց նկատմամբ պահանջարկը:

Հարկ է նշել, որ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում կարևորությունը տրվում է անուղղակի մեթոդներին, հատկապես՝ հարկային քաղաքականությանը: Մինդելիի կարծիքով, նորամուծական գործունեության պետական խթանման անուղղակի մեթոդների առավելությունը կայանում է նրանում, որ նորամուծությունների խթանման այդ համակարգը ուղղակի ֆինանսավորման համեմատ նվազ ծախսատար է, և մինչև ժամանակ հնարավորություն է ընձեռում ընդգրկել նորամուծական գործունեություն իրականացնող սուբյեկտների ավելի լայն շրջանակ<sup>4</sup>:

Ընդհանուր առմամբ, ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման պետական անուղղակի համակարգը պետք է ներառի հետևյալ տարրերը՝ խթանման օբյեկտները, նորամուծությունների գերակա ուղղությունները, խթանման ձևերն ու մեթոդները, ինչպես նաև նորամուծական գործունեության խթանման պետական քաղաքականության արդյունքների գնահատման մեխանիզմները<sup>5</sup> (գծապատկեր 1):

ՀՀ ագրարային ոլորտում ևս կարևորվում է նորամուծական գործունեության խթանման պետական համակարգի ներդրումը: Այս առումով անհրաժեշտ է վերլուծել ագրարային քաղաքականությունը և մշակել նորամուծական գործունեության խթանման հիմնական ուղղությունները:

<sup>3</sup> Дохолян С. В., Умавов Ю. Д. Инновационные подходы к повышению эффективности использования ресурсного потенциала агропромышленного комплекса // Ежеквартальный научно-практический журнал «Проблемы развития АПК региона». – 2011. – № 4 (8). с. 73

<sup>4</sup> Основы инновационного менеджмента: теория и практика: учеб. пособие / Под ред. А. К. Казанцева, Л. Э. Миндели. – М.: «Экономика», 2004. 518 с

<sup>5</sup> Баранова О. А. Тусков А. А. Система государственного стимулирования инновационной деятельности в апк // Современные проблемы науки и образования. – 2012. – № 6



**Գծապատկեր 1.** Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության պետական խթանման անուղղակի համակարգը

Վերջին տարիներին ընդունվել են մի շարք փաստաթղթեր, որոնք կոչված են ամրագրելու գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: 2010թ.-ին ընդունված «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությամբ» սահմանված է նպատակների 17 խումբ, որոնցում, սակայն,

որևէ անդրադարձ չի կատարվում նորանուծական գործունեությանը: Մյուս փաստաթուղթը 2015թ.-ին ընդունված «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարությունն» է: Այս ռազմավարությունը, որպես վերամշակող արդյունաբերության և բուսաբուծության ճյուղի պետական աջակցության ուղղություն, մատնանշում է առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը: Ընդ որում, փաստաթղթում սահմանված դրույթները շատ ընդհանրական են և չեն մանրամասնեցվում միջոցառումների մակարդակով: Այսպիսով, այս երկու ուղենշային ռազմավարությունները, որոնք սահմանում են ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները, անտեսում են նորանուծական գործունեության դերը ոլորտի զարգացման գործընթացում:

Ուստի, այս առումով կարևորվում է նորանուծական գործունեության պետական խթանման հիմնական ուղղությունների մշակումը և ռազմավարական փաստաթղթերում ներառումը: Որպես այդպիսի ուղղություններ պետք է հանդիսանան`

- ✓ արտադրության տեխնոլոգիական վերազինման, հայրենական և արտասահմանյան առաջավոր գիտատեխնիկական նվաճումների ներդրման, արտաքին և ներքին շուկաներում մրցունակ նոր արտադրատեսակների արտադրության համար բարենպաստ պայմանների ստեղծում,

- ✓ գիտատեխնիկական ոլորտում շուկայական հարաբերությունների ձևավորում, որը կնպաստի գիտության նվաճումների ռացիոնալ օգտագործմանը, գիտելիքների և տեխնոլոգիաների տարածմանը, գիտատեխնիկական նվաճումների առևտրայնացմանը,

- ✓ նորանուծական գործունեություն իրականացնող կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը պետական աջակցություն,

- ✓ իրենց արտադրատնտեսական գործունեությունում նորանուծական տեխնոլոգիաներ կիրառող ձեռնարկությունների և նորանուծությունների մշակմամբ զբաղվող կազմակերպությունների արտոնյալ վարկավորում,

- ✓ նորանուծական նախագծերի հավաստագրում և պետական երաշխիքների տրամադրում,

- ✓ նորանուծական ենթակառուցվածքի` գիտափնտցվածքի կենտրոնների, հիմնադրամների ստեղծմանն ու զարգացմանը աջակցություն:

**Արտյոմ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**Ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման պետական համակարգը**

*Բանալի բառեր. նորամուծական գործունեություն, խթանում, ագրարային ոլորտ, արտոնյալ վարկավորում*

Հոդվածում ներկայացվել է ագրարային ոլորտում նորամուծական գործունեության էությունը, առանձնահատկությունները և իրականացման հիմնական ուղղությունները: Բացահայտվել են ՀՀ-ում նորամուծական գործունեությանը խոչընդոտող հիմնական գործոնները: Ներկայացվել են ագրարային ոլորտում նորամուծական գործունեության խթանման ուղղակի և անուղղակի մեթոդները, ցույց են տրվել դրանց առավելություններն ու թերությունները:

**Артём ОГАНЕСЯН**

**Система государственного стимулирования инновационной деятельности в аграрном секторе**

*Ключевые слова: инновационная деятельность, стимулирование, аграрный сектор, льготное кредитование*

В статье рассмотрены понятие инновационной деятельности в аграрном секторе, их специфика и основные направления осуществления. Выявлены основные факторы, препятствующие инновационной деятельности в РА. Представлены прямые и косвенные методы стимулирования инновационной деятельности в аграрном секторе, показаны их преимущества и недостатки.

**Artyom HOVHANNISYAN**

**System of the state stimulation of innovative activity in agrarian sector**

*Key words: innovative activity, incentives, agrarian sector, concessional lending*

The article deals with the concept of innovation activity in agrarian sector, its specificity and the main directions of implementation. The main factors affecting the innovative activity in RA are revealed. Direct and indirect methods of stimulating innovation activity in the agricultural sector are presented, their advantages and disadvantages are showed.